ՀՌՈՄԵԱԿԱՆ «ԱՐՄԵՆԻԱՆ»՝ ՈՐՊԵՍ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳԻՐ

ՎԱՍԻԼՅԱՆ Վ. Հ.

Հռոմեական կայսրությունը պարտված երկրներին հաճախ էր ներկայացնում տվյալ երկրին բնորոշող անձնավորմամբ: Հայաստանի համար ընտրվել էր խրոխտ և անպարտելի ամազոնուհու կերպարը: Ամազոնուհիները պայքարող առասպելական կանանց ժողովուրդ էին, որոնք, ըստ վկայությունների, բնակվել են Կապադովկիայում (Փոքր Ասիա) կամ Մեոտիս լճի ափերին (այսպես էին անվանում հույներն ու հռոմեացիները Ազովի ծովը), Հյուսիսային Կովկասի լեռնային քարանձավներում[1]: Ամազոնուհիները ամուսնական կապ էին հաստատում հարևան ցեղերի տղամարդկանց հետ, որից հետո նրանց հետ էին ուղարկում իրենց հայրենիքը. տղա զավակներին տալիս էին հայրերին, իսկ աղջիկներին դարձնում էին ռազմիկներ: Ամազոնուհիների զենքերն էին երկսայր կացինը, նետ ու աղեղը, նիզակը, մահիկաձև վահանը, սաղավարտը: Անտիկ արվեստի հուշարձանների վրա (սկսած մ.թ.ա. VII դ.) ամազոնուհիները պատկերված են մկանուտ, գեղեցիկ կանանց կերպարանքով, տղամարդու սպառազինությամբ և հագուստով, հատկապես մարտի տեսարաններում: Նրանց մասին պատումները ստեղծվել են դեռևս նախահունական ժամանակներում՝ արտացոլելով մայրիշխանության շրջանը[2]: Զրույցները տարածված են եղել նույնիսկ միջնադարում[3]:

Ամազոնուհիների մասին լեգենդները լայնորեն տարածված են աշխարհի տարբեր ծայրերում. դրանք կամ տեղական ավանդությունների, կամ էլ հունահռոմեական պատումների արդյունք են[4]: Հատկանշական է, որ նրանք հռոմեացիների կողմից համարվել են Կովկասյան լեռնաշխարհի բնակիչներ: Հետևաբար, նաև այս հանգամանքով կարելի է բացատրել Հայաստանի՝ կնոջ կերպարով անձնավորումը ամազոնուհու տեսքով:

Հռոմեացիները վաղուց ունեին անպարտելի ամազոնուհիներին որպես նվաճված և գերված երկրների խորհրդանշական այլաբանություններ պատկերելու ավանդույթը, որպեսզի առավել շեշտեին կայսրության

---

[1] Мифы народов мира, *т. 1, М., 1987, с. 63-64.*

[2] *Դիցաբանական բառարան, Ե., 1985, էջ 14-15:*

[3] *Միջնադարում, հատկապես աշխարհագրական խոշոր հայտագործությունների ժամանակաշրջանում, ամազոնուհիների թագավորությունը փնտրել են Ամերիկայում (հմմտ. Ամազոն գետի անվանումը): «Ամազոնուհի» այալաբանորեն նշանակում է հեծյալ կին: Ձիավարության երկար զգեստը կոչվում է «ամազոնկա»:*

[4] **Косвен М. О.** *Амазонки. История легенды (Советская этнография, 1947, N 2-3):*

հզորությունը[5]: Ամազոնուհի - ռազմիկի, անպարտելի կնոջ կերպարի ընտրությունը պատահական չէր: Հետաքրքրական է, որ Հայաստանի առաջին հավաքական անձնավորումը կնոջ կերպարով ծագել է հենց Հռոմից:

Հռոմեական կայսրերն ու զորավարները, հանրապետական Հռոմի իշխանության ժամանակաշրջանից սկսած, թողարկում էին ոսկե, արծաթե, պղնձե դրամներ (նկ. 1)՝ նվիրված Հայաստանի նվաճմանը[6]: Նշենք, որ այդ «պատվին» էին արժանանում հռոմեական իշխանության թշնամի և նվաճված բոլոր երկրները[7]:

Հռոմեական դրամների վրա Հայաստանը այդ առումով առաջին անգամ ներկայացվեց Մարկոս Անտոնիոսի օրոք: Հենց Հռոմից սկսվեց Հայաստանի պատկերումը թագուհու խորհրդանշական կերպարով[8]: Ուշագրավ է, որ Հռոմը իրեն ենթակա տերությունները պատկերել էր դեռևս հելլենիստական խճանկարներում՝ ամբողջական քարտեզի տեսքով, որտեղ տարածաշրջաններից յուրաքանչյուրն անձնավորված էր: Հայաստանին բաժին ընկավ «պարտված թագուհու» կերպարը: Պարտված պետությունները (Անտիոքը, Բրիտանիան, Սիցիլիան, Աֆրիկան, Գալլիան, Հայաստանը և այլն) հռոմեական դրամների վրա ներկայացվում էին կենդանիների կամ այլաբանական տարբեր անձնավորումների տեսքով[9]:

Որպես Հռոմեական կայսրության կողմից նվաճված երկրի անձ-նավորում՝ «պարտված թագուհուն» ներկայացրել են մի պարզ պարեգոտով, որի տակից երևում է երկար ու նեղ փողքերով անդրավարտիքը՝ ըստ հայապարթև տարազի: Այդ «պարտված թագուհիները» կոչված էին ներկայացնելու պետության և հայրենիքի հետ կանանց նույնացումը, բայց դրանք հավասարապես նաև նվաճված տարածքների յուրացման խորհրդանիշներ էին: Հայաստանի պարագայում ինչի՞ հետ կարող էր այն կապված լինել: Ինչու՞ պարտված՝ գահընկեց հայոց թագուհին, և ինչու՞ կնոջ կերպար:

Հայաստանում վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանից սկսած՝ գոյություն ուներ պատերազմի կույս դիցուհու պաշտամունքը, որի հովանավորությունն ու խնամակալությունը հաղթանակ էր բերում: Դա առնչվում էր ռազմի աստծո պաշտամունքին նոր կազմավորվող երկրամասերում (օրինակ, Էգեյան աշխարհ, Հայկական լեռնաշխարհ, Փոքր Ասիա, Մերձավոր Արևելք):

---

[5] **Frauen S.** *Katalog. Staatliche Antikesammlungen, München, 2012,* S. *241-243.*

[6] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե., 1971, էջ 625, 631:*

[7] **Մուշեղյան Խ.,** *Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. Vդ.-մ.թ. XIVդ.), Ե., 1982, էջ 93:*

[8] **Վասիլյան Վ.,** *Թագուհիների պատկերագրումը հելլենիստական Հայաստանի արվեստում (Բանբեր Երևանի համալսարանի, 2014, N 3, էջ 18-34):*

[9] *Օրինակ՝ Լուցիոս Հոստիլիոս Սասեռնայի դենարների վրա Գալլիան (այժմ՝ Ֆրանսիա) անձավորված է տխուր, հերաձակ կույսի գլխով, իսկ Քվինտուս Մետելլուս Սցիպիոնի դրամների վրա Աֆրիկան ներկայացված է կնոջ դեմքով, քթի փոխարեն՝ փղի կնճիթով:*

Նկ. 1. «Պարտված Հայաստանը» մակագրությամբ հռոմեական դրամներ (I-II դդ.)

Հելլենիստական երկրներում տարածված էր երկրի կամ քաղաքի անձնավորումը մայր աստվածուհու՝ որպես երկրի հովանավորի և պահապանի հավաքական կերպարում: Հայաստանում դա Անահիտն էր, որը, Արտաշեսյանների ժամանակաշրջանում, Տիգրան Մեծից սկսած, պատկերվում էր թագավորական դրամների դարձերեսին՝ որպես թագավորի նախամայր և երկրի խնամակալ: Փոքր Ասիայում, նեոլիթյան ժամանակաշրջանից ի վեր, պաշտվում էր գահանիստ Մայր աստվածուհին՝ իր արևորդիների հետ: Այս աստվածուհուն տեսնում ենք նաև ուրարտական Արուբանի աստվածուհու կերպարում՝ որպես պտղաբերության և բարօրության հովանավոր մայր դիցուհու: Այս կերպարը Հայաստանում նախատիպ ծառայեց մայր աստվածուհի Անահիտի պատկերատիպի ձևավորման համար՝ որպես Արևամայր, թագավորին ծնող և երկիրը սնող, գահին բազմող գլխավոր աստվածուհի: Եվ հենց այս նույն՝ մայր աստվա-

ծուհու կերպարն էր, որը հռոմեացիների կողմից «գահընկեց» արվեց և ներկայացվեց որպես պարտյալ երկրի խորհրդանիշ: Սա վկայում էր անտիկ Հայաստանում մայր աստվածուհիների և թագուհիների պաշտամունքի մասին, որոնց տապալումը նշանակում էր Հայաստանի պարտություն:

Անահիտը միշտ սիրված է եղել հայ ժողովրդի կողմից: Նա հայերի համար ոչ միայն կյանքի, պտղաբերության և պաշտպանության խորհրդանիշ էր, այլև փառք բերող դիցուհի, երկրի հովանավոր մայր աստվածուհի[10]: Նա նույնացվել է թագուհու՝ սնուցող մոր հետ, և նրան կոչել են «Ոսկե մայր»՝ ոսկուց ծնված աստվածուհի: Անահիտի լայն ժողովրդականության մասին անուղղակի տեղեկություններ են հաղորդում նաև հռոմեացի հռետոր Ցիցերոնը, հույն պատմիչ Պավսանիոսը, պատմագիրներ Դիոն Կասիոսը, Պոլիբիոսը, Տակիտոսը և այլք: Պրոկոպիոս Կեսարացին նույնպես վկայում է Եկեղյաց գավառում, Պոնտոսում և Կապադովկիայում գտնվող անահտական մեհյանների մասին: Անահիտը համապատասխանում է հունական Արտեմիս[11] դիցուհուն հռոմեական Դիանային[12], պարս-կական Անահիտային (նշանակել է անբիծ, անարատ), եգիպտական Նիֆթին, հնդկական Նիյադային: Ինչպես գրում է Ալիշանը, այս դիցուհին հիշվում է նաև տարբեր անուններով, ինչպես Անեա, Անեիդ, Անի[13]:

Հայաստանում Անահիտը, պտղաբերության, ծննդաբերության, արգասավորության աստվածուհի լինելուց բացի, եղել է «մայր ամենայն զգաստության» և առաքինության խորհրդանիշ, հայ ժողովրդի ամենասիրված

---

[10] Անահիտը մայրության, բերքի և պտղաբերության հայոց ամենասիրելի դիցուհին էր: Նրա պաշտամունքը ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. III հազարամյակում: Անահիտի պաշտամունքային տաճարներ են եղել Եկեղյաց գավառում, Տարոնում, Վասպուրականում, Արմավիրում, Արտաշատում: Ամենա-նշանավորը Եկեղյաց գավառի Երիզա ավանի (հետագայում՝ Երզնկա) տաճարն էր, որտեղ դրված էր Անահիտի ոսկեձույլ արձանը, որի համար էլ նրան կոչել են Ոսկեծղի (ոսկեբազուկ), Ոսկեհատ, Ոսկեծին-Ոսկեմայր: Այդ ոսկեձույլ արձանն այնքան մեծ էր, որ երբ հռոմեացի զորավար Մարկոս Անտոնիոսը մ.թ.ա. 34 թ. իր պարթևական արշավանքի ժամանակ մտնում է Երիզա, նրա զինվորները ջարդում են Անահիտի ոսկեձույլ արձանը, կտոր-կտոր անելով բաժանում իրար մեջ՝ որպես ավար: Այդ արշավանքին մասնակցած հռոմեացի ոմն զինվոր տունդարձին ճոխ ճաշկերույթ է կազմակերպում Օգոստոս կայսեր պատվին, և երբ կայսրը հարցնում է Անահիտի արձանի մասին, զինվորը պատասխանում է, թե ինքն է եղել առաջինը արձանի վրա հարձակվողը, և այդ ճաշկերույթի ծախսն էլ հոգացել է Անահիտի արձանի սրունքի մի փոքրիկ կտոր վաճառելով (Դիցաբանական բառարան, էջ 18):

[11] Նույն տեղում:

[12] Նույն տեղում, էջ 39: Ըստ Ղևոնդ Ալիշանի, «Դիանա» անունը վերջից կարդալով ստացվում է «Անահիդ» (**Ղևոնդ Ալիշան,** *Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 400): Նրա կարծիքով, Սատաղից գտնված «Անահիտի բրոնզյա գլուխը» պատկերում է հունական Արտեմիս դիցուհուն, հռոմեական Դիանային, որը Հայաստան բերվելով համադրվել է Անահիտին և դրվել Սատաղում գտնվող նրա տաճարում:*

[13] Տե՛ս **Ղևոնդ Ալիշան,** *Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 279-280:*

դիցուհին, երկրի հովանավորը: Ագաթանգեղոսը նրան անվանում է «...այսմ մեծի Անահտայ տիկնոջս որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր և թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց, որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, և ծնունդ է մեծին արին Արամազդայ»[14]: Առավել վաղ շրջանում նա նաև ռազմի աստվածուհի էր, Արամազդի դուստրը: Անահիտը միաժամանակ համարվում էր լուսնի[15] աստվածություն, բայց որոշ գործառույթներով առավել համապատասխանում էր արևամոր[16] կերպարին: Իբրև Արտաշատի հովանավոր, համադրվել է նաև Տյուխե-Անտիոքիայի հետ, որի արձանը Սելևկյանների օրոք կանգնեցվել է Անտիոքի մոտ, բարձունքի վրա, Օրոնտես գետի ափին: Տյուխե քաղաքի պահապան դիցուհու կերպարն էլ հետագայում նախատիպ դարձավ հայկական դրամներում թագուհիների ներկայացման համար: Եվ այս թագուհիների հզոր կերպարն էր, որ հետագայում «ծնկի իջեցվեցին» ու «գահիկնեց արվեցին» Հռոմեական կայսրության հաղթանակը փառաբանելու համար:

Ամազոնուհիների հովանավոր աստածուհին էր Արտեմիսը, որի մեծ պաշտամունքը Հայաստանում հայտնի էր հռոմեացիներին: Կարծում ենք՝ բացառված չէ, որ այս պարտված ամազոնուհու կերպարում նախատիպը պարտված Հայաստանի խորհրդանիշ հզոր աստվածուհի Անահիտն է:

Անդրադառնանք հռոմեական «Արմենիա»-ին՝ որպես Հայաստանի առաջին հավաքական անձավորմանը: Նեապոլի հնագիտական թանգարանի Նեպտունյան սրահում է գտնվում Ադրիանոս կայսեր օրոք (117-138 թթ.) կերտված «Արմենիան» (նկ. 2), որի հայկական տարազը և խույրը ուսումնասիրելով՝ մասնագետները այս քանդակը Հայաստանի խորհրդանշական պատկերն են համարում[17]:

Հռոմեական կայսրության տիրույթները նրանց պատկերագրության մեջ ներկայացվում էին յուրաքանչյուր երկրին բնորոշ կերպարով (օրինակ՝ պարտված զինվորի, ծնկաչոք արքայի, հերարձակ կնոջ կամ էլ կենդանիների այլաբանությամբ): Հայաստանը խորհրդանշվում էր նետ և կապարճ բռնած հայապարթև տարազ կրող կնոջ կերպարով: Բազմաթիվ ուսումնասիրողներ «Արմենիա»-ի ձեռքի նետը դիտարկել են որպես սուր՝ վատ վերաբերության և այն թյուրիմացության պատճառով, որ նրա առաջին ուսումնասիրող Վ. Հացունին[18], իսկ այնուհետև՝ Ա. Պատրիկը[19] այսպես են ներկայացրել: Քանի որ նրանք իրականում տեսել էին նշված քանդակը:

---

[14] Տե՛ս **Ագաթանգեղայ,** *Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 31:*

[15] *Դիցաբանական բառարան, Ե., 1985, էջ 18:*

[16] **Հարությունյան Ս.,** *Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000 թ., էջ 47, տե՛ս նաև* **Մելիք-Փաշայան Կ. Վ.,** *Անահիտ դիցուհու պաշտամունքը, Ե., 1963, էջ 66-71:*

[17] **Պողոսյան Ս.,** *Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Ե., 2001, էջ 75:*

[18] **Հացունի Վ.,** *Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1924, էջ 82-85:*

[19] **Պատրիկ Ա.,** *Հայկական տարազ, Ե., 1967, էջ 21:*

Սակայն այժմ ունենք այս քանդակի առավել պարզ վերատպությունը, որտեղ սրի տարբերակը բացառվում է: Նետն[20] ու կապարճը ևս ապացուցում են, որ ազնվական կնոջ կերպարում ամազոնուհի է ներկայացված՝ որպես ռազմիկ և որսորդ. նրան հաճախ էին պատկերում նետ-աղեղով: Հետաքրքիր է նաև պարտված Հայաստանը կոտրված աղեղով և հատած սաղավարտով պատկերելը:

Նրա գլխարկը կամ սաղավարտը վերևից հատած կոնի տեսք ունի (հնարավոր է, որ այստեղ առկա է նաև Արտաշեսյան թագը՝ հատած, և ատամնավոր վերջավորությունը կտրված՝ որպես պարտյալի նշան. այդպես նաև նետի ծայրն է կոտրված), ծոծրակակալով, բազմածալ մի թիկնոց ուսերի վրա, որ ճարմանդով հավաքված է աջ կողմում: Ազնվական ծագմամբ կինը հավանաբար թագուհի է՝ տղամարդուն բնորոշ զգեստավորմամբ և զենքերով: Նրա կերպարը ամազոնուհիների նման «երկսեռ» է. «Հայաստանը», որը մեր ժողովրդական հեքիաթներում և ավանդություններում իգական սեռի է, այստեղ ներկայացված է տղամարդու հագուստով, որը կանանց հագուստներից տարբերվում էր կարճ պարեգոտով ու վերնազգեստով, որոնք էլ հատուկ են միայն տղամարդկանց: Իսկ իշխանական ճոխ տարազը տարբերվում է ժողովրդականից: Հայոց թագուհու գլխին կոնաձև խույր (սաղավարտ) է, որի ծայրը տափակ է, հատած, վիժակը (ծածկոց)[21] փակում է ծոծրակը: Սաղավարտը առջևից բաց է, դիմացից եզրագծում է դեմքը, ականջակալներով փակում ականջները[22]: Խույրի այս ձևը մեզ հիշեցնում է փռյուգիական գլխարկները: Արտաքինից ազնվական հիշեցնող այս «իշխանուհին» կրում է բաճկոն, որը, ինչպես պարթևականը, ծալքերով իջնում է ծնկներին և ուղիղ վերջավորությամբ ավարտվում: Հագուստի թևքերը պսակվում են երիզաձև թեզանիքներով: Զգեստը, որը ներքնազգեստի վրայից է հագած, անթև է՝ լայն ու բազմածալ, քանի որ առաջամասում հավաքվում է դեպի վեր և ծալքեր է կազմում որովայնի շուրջը: Ներքևի երկու ծայրերում կախված են մեկական զարդեր: Հագուստն ունի լայն գոտի, որի ծայրերը հանգուցված են մեջքին:

Լայն, ճոխ, բազմածավալ թիկնոցը ծածկում է թիկունքը, արքունական ծիրանիի նման ճարմանդվում է աջ ուսին և իջնում երկար, զարդարուն զգեստին հավասար[23]:

---

[20] *Նրա ձեռքի իրը մեզ թույլ է տալիս այն նետ համարել՝ փետրավոր վերջավորության և կոտրված ծայրի պատճառով. բացի արտաքին նմանությունից, այդ մասին է հուշում նրա՝ մյուս ձեռքում բռնած կապարճը: «Պարտված Հայաստանի» նմանությամբ դրամների վրա կարող ենք Հայաստանի պարտությունը տեսնել կապարճի և նրա մեջ դրված նետերի, հայկական Արտաշեսյան թագի, նետն ու զենքերը ոտքերի մոտ թափված, ծնկաչոք հայ թագուհու պատկերումով, ինչն էլ ապացուցում է նշված տեսակետը:*

[21] **Աճառյան Հ.,** *Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 338:*

[22] **Հացունի Վ.,** *նշվ աշխ, էջ 80:*

[23] **Պատրիկ Ա.,** *նշվ. աշխ., էջ 27:*

«Արմենիա»-ի վարտիքը նույնպես պարթևական է, գոտևորված, հասնում է մինչև ոտնաթաթերը և հավաքվում ներքևում: Կոշիկները ծածկում են թաթերը: Վ. Հացունին այս քանդակի սուրն ու կապարճը (ինչպես արդեն նշվեց, նա սուր էր դիտարկում կոտրված ծայրով նետը) հայկական տարազի մաս չէր համարում՝ դրանց վերագրելով զուտ դեկորատիվ նշանակություն[24]:



Նկ. 2. Հռոմեական «Արմենիա» պատկերաքանդակը (II դ.)

Հատկանշական է նաև հայոց թագուհիների պատկերումը գետնին՝ հռոմեական կայսեր առջև աղաչական ձեռքերով, ողորմածություն հայցելու դիրքով: Սա հռոմեացիների մոտ հայոց թագավորական իշխանության տապալման և երկրի հպատակման խորհրդանիշ էր, այնուամենայնիվ, թագուհու կերպարով երկրի այլաբանությունը մեզ հայազգի իշխանուհիների և թագուհիների պատկերագրական առանձնահատկությունները ներկայացնելու հնարավորություն է տալիս: Կնոջը տղամարդու հագուստով, Արտաշեսյաններին բնորոշ պարթևական անդրավարտիքով և հռոմեական կարճ պարեգոտով պատկերելը դաշնակից փնտրելու ճանապարհին հայերի վարած դիվանագիտության նկատմամբ անարգանքի և քամահրանքի նշան կարող էր լինել:

[24] Նույն տեղում, էջ 80:

Մայր Հայաստանի՝ թագուհու պատկերը շուրջ 2000-ամյա զարգացման ընթացքում ժողովրդի մեջ չկորցրեց իր ավանդական նկարագիրը և կապված է ազգի ինքնագիտակցության մեջ արմատացած՝ մայր աստվածուհու ռազմատենչ կերպարին:

РИМСКАЯ “АРМЕНИЯ” КАК ПЕРВЫЙ СОБИРАТЕЛЬНЫЙ ОБРАЗ МАТЕРИ–АРМЕНИИ

ВАСИЛЯН В. О.

Резюме

Первая персонификация Армении – скульптура “Арме-ния” была создана по заказу императора Адриана в эллинис-тический период. По всей вероятности, данная скульптура, которая экспонируется в Археологическом музее Неаполя, представляет собой образ амазонки, вооруженной стрелой и колчаном. Римляне часто изображали последнюю в качестве символа стран, потерпевших поражение. Примечательно, что собирательный образ “Матери-Армении” имеет 2000-летнюю историю. Фактически Армения впервые была представлена в римском искусстве в образе целомудренной женщины-воительницы, являвшей собой собирательный образ страны.

ROMAN “ARMENIA” AS THE FIRST COLLECTIVE IMAGE OF MOTHER ARMENIA

V. VASILYAN

Abstract

The first personification of Armenia, sculpture “Armenia,” was created at the request of Emperor Hadrian in the Hellenistic period. The sculpture, which is exhibited in the Hall of Neptune in Naples, represents the image of an Amazon woman, armed with an arrow and quiver. She often symbolizes a defeated country in the Roman art. The collective image of “Mother-Armenia” has a 2000-year history. In fact, Armenia was first introduced into the Roman art as a chaste woman warrior, embodying the collective image of the country.